

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԱՆԴԻՄՈՒԹԻՒՆ

Ի ՍԻՄՖԵՐՈՊՈԼ



Յերտուկաց արժանի, անցեալ 1888 տարին, պսակեց Սիմֆերոպոլի կաթողիկէ շայոց յառաջագիմուծիւնը, որուն արձագանգը անտարակոյս գարուց ի գարս պիտի հնչէ: Մեր սիրելի և մեծարգոյ բանասէրք, անշուշտ կարգացել են «Նոր - Դարին» էջերուն մէջ. յիշեալ ազգայնոց յառաջագիմուծեան նկատմամբ, մէկ կամ միւս յօգուածը, սակայն որոշ գաղափար ստանալու համար կը ստիպուինք հաղորդել բանասիրաց հետեւեալը, միանգամայն ազգայնոց եռանդը և ևս արծարծելու ի յառաջագիմուծիւն, և չի տատանելու ամէն կողմէ փլած ցուրտ և տաք քամիներէ:

Վնենտկոյ միթիթարեան միաբանուծիւնը 1863 էն ի վեր կը կառավարէ Սիմֆերոպոլի առաջնորդուծիւնը ի հոգևորական մասին, իրեն քարոզիչներովը, որոց առաջինը եղաւ լուսահոգի գերապատիւ Վ. Շ. Սիմէոն ճուլարտեան բազմարդիւն Վարդապետը, և ցայսօր նոյն միաբանուծեան անձինքը կը մատակարարեն ժողովրդեան եկեղեցական խորհուրդները, քարոզելով զբան Տեառն անձնուրաց կամօք, յօգուտ հաւատացելոց և ի փրկուծիւն:

Յամի Տեառն 1862 ին շինուեցաւ Եկեղեցին յանուն և ի պատիւ «Փրկչին», արդեամբ և ծախիւք Կիւմիճիանեցի Սարգիս աղա Նալչպանտեանի, որ Սիմֆերոպոլ եկած ժամանակը խելձ, ողորմելի և աղքատ մարդուն մէկն էր, բայց իրեն աշխատեցուծեամբ քիչ տոնէնէն հազարներու տէր եղաւ, և նոյն իսկ Ռուսաց Տէրութեան դիմաց մեծ անուն և պատիւ ստացաւ, այնպէս որ քաղաքին կուսակալն անգամ կը պատկառէր իրմէն, թէպէտ ուսում չունէր և ոչ իսկ տեղեակ էր լաւ ռուսերէն լեզուի: Իրեն ազգայինները կը պաշտէին զինքը, վասն զի հայր էր ամենուն, օգնելով ամէն մէկուն ոչ միայն խորհրդով, այլ ըստ տեղւոյն և պարագային նաև դրամով, որպէս զի առաջ երթան, և մարդ ըլլան բարոյապէս և նիւթապէս: Այս իրեն վեհանձն, աշխիւ, եղբայրասէր, ազգասէր և բարեպաշտ սիրտը պատճառ եղաւ իրեն, «Աղնուականաց» կոչուած փողոցին վրայ, — որ քաղաքին գրեթէ առաջին տեղին է, — 8728 քառակուսի մէդր տեղ մը զնէ և հին եկեղեցին կանգնել, քահանայի քնակարանով և փոքր վարժատունով մէկտեղ, որոնք ընդ ամենը վաթսուհ հազար ըրապիկ նստան իրեն: Վերջապէս ամէն բան կարգի դնելէն ետքը, բարեգործութեան, ազգասիրութեան և ճշմարիտ աստուածապաշտութեան հետ և վեհանձնութեան ոգւոյն շի մնաց պարտաւոր, վասն զի շինած եկեղեցին իւր վերաբերեալ ամենայն մասամբը, մշտնջենապէս ընծայ ըրաւ իր սիրելի ազգայիններուն, Սիմֆերոպոլի կաթողիկէ հայ հասարակութեան, իրեւ յատուկ ստացուածք իւրեանց:

Բայց ափսոս, որ մարդկութեան մեծ բարերարը, մէկ տարիէն աւելի չի կրցաւ վայելել իւր քրտանց արգիւնքը, և ուրախանալ իր ազգայիններուն հետ, փառաբանելով իր աստուած նոր շինած առճարին մէջ, վասն զի 1864 ին մայիսի առաջին օրը, քաղցր կենաց 67 տարւոյն, աւանգէց մաքուր հոգին Ստեղծողին ձեռքը, որ իր սիրելոյն արգիւնքը չուտով վարձատրելու նպատակաւ, կանչեց զինքը ի կատարեալ և յանձն երջանկութիւն: —

Ո՛րչափ ցաւալի է մարգկութեան ազդի այսպիսիներուն մահը, որ ազդի մը կամ ժողովրդեան մը նիւթական յառաջդիմութեան վրայ մեծ ազդեցութիւն ունի, և կերպով մը անոր խաւարմանը պատճառ կրնայ ըլլալ, բայց միւս կողմանէ Աստուծոյ անքնին գազանիքը մեզի անյայտ է, բայց գառաստանը արգար:



Ամենաբրկիչ եկեղեցի 'ի Սեմֆուրպուլ.

Հանգուցեալ մեծ բարերարին մարմինը թաղուեցաւ փառք իր լինած եկեղեցւոյն բակը, որի ելի կնիակցին գերեզմանին քով. Սոփիայ Միքայէլեան Նալպանտեանի, որ


իրմէ երկու տարի տաւ ժողովեցաւ առ Աստուած, դեռ ծաղիկ հասակին 38 րէն. — Հանգուցելոյն որդիքը, վայելուչ մահաբան մը կանգնեցին ի յիշատակ անձն. առջ. իրենց հորը գերեզմանին վրայ, հետեւեալ արձանագրութեամբ. « Տապան հանգրուան Սարգսի Յովնանիսեան Նալպանտեան. վախճ. 1 մայիսի 1864, 67 տ. մահոյ: Մահաբանին միւս կողմը, ի յիշատակ իրենց մօրը, հետեւեալը. « Տապան հանգրուան Սոփիայ Միքայելեան, վախճ. 1. փետր. 1862, 38 ամսոյ »:

Սիմֆերոպոլի մէջ քանի որ չկար ազգային եկեղեցի, ժողովուրդը ի պարտուց քրիս. տոնեական սկզբան, քաղաքին լատինացւոց ժամը ստիպուած էր երթալ պատարագ տեսնելու, և ուրիշ հոգեւոր քրիստոնեական թիւնին կատարելու. բայց մի և նոյն ժամանակ, խոստովանութեան կամ ուրիշ եկեղեցական պաշտամանց համար, թարա. սուպալար եղած միութեան քահանաներէն մէկը կամ միւսը կուգար ստեղծ Սիմֆերոպոլ, որոյ համար բաց էին միշտ Սարգիս աղային դռները, և առիթներով կը հիւրընկալէր սիրով և ամենայն յարգութեամբ զսմէնքը, մինչև անգամ երթալու և դալու ճանապարհի ծախքն ևս հոգալով:

Եկեղեցին չի ունէր ժամանակը, Սիմֆերոպոլի մէջ կաթողիկէ ազգայիններէն քանի մը ընտանիք միայն կ'երևային ասդին անդին քաղաքին մէջ ցրուած, այսօրուան օրս անոնց թիւը 100 ի կը հասնի, որոնց մեծագոյն մասը թարասուպաղարէն գաղթել են ի Սիմֆերոպոլ, և տարի տարուան վրայ բազմաճառու վրայ են: Ներկայ ժողովուրդէն մը, պարենաւով կրնանք ըսել, կը գտնուին ամէն տեսակ վիճակի և աստիճանի անձինք. ինչպէս, բժիշկ, օրէնսգէտ, փաստաբան, ուսուցիչ, տէրութեան պաշտօնատէր, և եկեղեցական, զինուորական, երաժիշտ, ճարտար արուեստագէտ, վաճառական և այլն, և նոքա ամէնքն դարուս հետ հետզհետէ ի յառաջագիմութիւն կը դիմեն, և յոյս կու տան մեծամեծ ակնկալութեանց երջանիկ գրանց նորէն բացուելու յապագային. բաւական է որ, — ճամբարութիւնը առանց ծածկելու, — տարածայն. նութեան ապականիչ սերմը, որ մեր ազգին սկզբնական մեղքն է, զօրաւոր քամի մը Սիմֆերոպոլի լեռնացեալ ալեաց մէջ անհետացնէ: — Վերջապէս անցեալը միտքերնիս պահելով, խօսինք մերձակային վրայ:

Սիմֆերոպոլի կաթողիկէ ազգայնոց, 1887 ին ժողովրդագրական փոփոխութեան առթիւ, յարոյց Տէր ի ժողովրդէնէ երկրորդ Նալպանտեան Սարգիս մը. Միժպալատիս Զրայանեան խաչընէս Սիմֆերոպոլ, որ բարեպաշտութեամբ, ողորմածասիրութեամբ և անբաւ բարեգործութեամբ կը փայլէ ոչ միայն ազգայնոց մէջ, այլ և օտարաց դիմաց: Այս պատկառելի անձին, ինչպէս նաև բոլոր ընտանեաց առաջին յատկութիւններէն մէկն է կարեկից ըլլալով գնահատել հոգեւորականները, ըստ զարգացեալ մարդկութեան. վասն զի լաւ ըմբռնել են հոգեւորականին պաշտաման լուծը, որուն միութեամբութիւնը միմիայն երկինքն է, և իրեն հօտին բարի սիրտը և երջանկութիւնը: — Բարոյական օրէնք է, բնութեան անլուծանելի կապ, և կատարեալ մարդկութեան հետեանք, որ սէրը փոխադարձ է. այս սկզբամբ հոգեւորականը համարձակ և սիրով կը յաճախեն թաղերս աղային տունը, որ բաց է միշտ ամէն վիճակի և աստիճանի անձանց դիմաց, ներս մտնողը ձեռնուռայն չ'իշխէր դուռս, եթէ այն նպատակաւ ստիպուի գուռը զարնել: — Թաղի բնակալային յայտնի և անյայտ բարեգործութիւնները ուրաջօրն մահուցի կը մեղանչէ: Ամենուն յայտնի բարեգործութիւններէն մէկն է, տարուան տարի քաղաքին կաթողիկէ ազգայնոց վարձատան 300 բուսկի նուէրքը, զոր տարիներով առաջ սկսած է և ցայսօր կը շարունակէ:

Վառաձորի Սարգիս աղան (Թեպետ կանգնեց եկեղեցին, և ձգեց հիմը իր ազգայիններուն հոգևոր կենտոց և ազգայնութեան հաստատութեան, սակայն ի կատարելութիւն հասնելու դեռ չառ բան կը պահպէր, որ համապատասխանէ ժամանակիս



Առաջնորդարան .

յառաջադիմութեան . Այս տանը լաւ ըմբռնելով խաչերես աղան, գլուխ կեցաւ դուռնայն որ Սարգիս աղային սկսածը առաջ տանի և հասցնէ ի կատարելութիւն . ուստի քանի մը անգամ ժողովք գումարելով վերջապէս որոշուեցաւ միաձայն հաւանու-

Թեամբ ժողովրդեան, որ ժամանակն հասել է, պէտք է ամենայն գծուարութեանց յաղթել. խոտոանալով ամեն մէկը կրցածին չափ ձեռնառու ըլլալ ի դիւրութիւն և ի յաջողութիւն գործոյն: Այս եռանդեամբ գործոյն ձեռք զարնելով, ոչ միայն քաղաքին կաթողիկէ ազգայինք, այլ և հեռաւորք անգամ, ինչպէս գովասանաց և խորին շնորհակալութեան արժանի Խարասուպազարի ազգային եղբարք, վառուեցան ի սէր օգնութեան հասնելու. նոյնպէս ի Թիֆլիզէ առատաձեռն պարոն Պօղոս Գուրգեն. նեան, աշակերտ Մուրատ - Ռաֆ, վարժարանին, 200 հոռպի ուղարկեց ի նպաստ. և ի վննեակոյ Միթարեան միաբանութեան ընդհանրական Աբրահ, արհիապատիւ Տէր Իքնատիս վ. Կիւրեղեան, արքեպիսկոպոս Տրայանուպօլսոյ, 1000 ֆրանգ:

Այս ամենայն յաջողութիւնք քաջաբերութեան յորդոր ըլլալով ժողովրդեան, առաջին գործն եղաւ, եկեղեցւոյ նորոգութիւնը, բաւական փոփոխութեամբ ի ներքոյ և արտաքոյ. երկրորդը, ժողովրդապետական հին բնակարանը և վարժատուն շէնքը վերածել ամբողջ ի վարժատուն, մեծ ամեծ փոփոխութեամբ, գիմացը գեղեցիկ և ընդարձակ ապակեայ սրահով, և երրորդը, փողոցին վրայ նոր առաջնորդարան, նը շինել — Յիշեալ շէնքերուն լուսանկարը ահա կը ներկայացնէր առաջիկայ ամսոյս հանդիսարանին մէջ, ի տես մեր յարգոյ բանասիրաց: Այս ամենայն նորութիւնները անցեալ 1888 տարւոյն վերջերը կատարուեցան, ի զարմացում ոչ միայն օտարաց քաղաքին, այլ նաև ազգայնոց անգամ:

Անժխտելի ճշմարտութիւն է, որ այս մեծ յառաջագիմութեան քայլը ժողովրդեան ուժովը եղաւ, կեցցեն ամենեքեան միաբան. բայց զայն ևս պէտք է խոտոմանիլ և առաջինէն մեծագոյն ևս անժխտելի ճշմարտութիւն համարել, որ եթէ Զրախեան Խաչերես աղան գլուխ կեցած չըլլար գործոյն, տարակուսելի էր ամենայն յառաջագիմութիւն: Կեցցէ՛ր ա ինքն Խաչերես աղան ընդ կենակցին իւրոյ բարեպաշտուհի և աղքատասէր Կատարինէ Տիկնոջ, որոյ միջնորդութիւնը ի յաջողութիւն գործոյն և ի յառաջագիմութիւն արգայնոց, մեծ ապերախտութիւն է ուրանալն:

Յիշեալ նորութեանց մէջ, ամենէն աւելի խորհրդածութեան նիւթ է փողոցին վրայ նոր շինուած շէք առաջնորդարանը, գրեթէ անմիջապէս եկեղեցւոյն քով, որոյ բացման և օրհնութեան հանգէսը, առաջիկայ 1889 տարւոյս յունուարի 25 ին հետեւեալ կերպով կատարուեցաւ:

Տօնախմբութեան հանգէսէն 15 օր առաջ Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովը, գեան կողմանէ հրաւիրանաց թղթեր ուղարկուեցան ասպին անգին, և մասնաւորապէս գրամական նպաստիք մասնակից եղողներուն յիշեալ յառաջագիմութեանց: Հանգիսին նախընթաց օրը բարերարաց ծախիւք հարկաւոր կահ կառասիք առնուեցան նոր առաջնորդարանին համար՝ իբրեւ ընծայ ի ժողովրդեան, ըստ սովորութեան արեւելեայց, նոր բնակարան օրհնելու ժամանակ:

Վերջապէս եկաւ, հասաւ ժամագրեալ օրը, 1889 յունվարի 25, յիշատակաց արժանի երկրիս շրջանին կէտը, ուր պատմագրին գրեցը ջանքերը ծարաւ և ոչ ալ քաղցած իրեն ժամանակին: Առաւօտեան ժամը 10ին ի ձայն առաջին զանգակի, ժողովուրդը որ արգէն անգիտի էր նոյն օրուան հանգէսին, սկսաւ լեցուիլ եկեղեցին, և ի ձայն երկրորդ զանգակի սկսաւ ձայնաւոր պատարագը, զոր մատոյց տեղոյն առաջնորդը Հ. Նիկողայոս Զիգի միթարեան վննեակոյ, վասն յաջողութեան և երջանկութեան ժողովրդեան, հայկական արարողութեամբ, աշակցութեամբ Խարասուպազարի յարգապատիւ միթարեան Հարց: Հ. Համալսապ Սափարեան Ժո.

ղովթագետին, և իրեն օգնական Հ. Անտոն վարդապետի Պետանեան, որոնք նշնպէս հրաւիրեալք էին ի տօնախմբութիւնն:

Ձայնաւոր պատարագը լմնալէն ետքը, քահանայք և ժողովուրդ միասին, նոր առաջնորդարանը իջնելով, կատարեցին օրհնութեան հանգեսը, յորում մերկայ էր և քաաքին ոստիկանութեան գլուխը, մեծապատիւն Արքա իրեն օգնականովք, որոնք



Աարժարան .

նշնպէս հրաւիրուած էին ժողովրդեան կողմանէ: — Բազմութեամբ ազգայնոց լեցուած էր առաջնորդարանը, մեծաւ մասամբ տեղացիներով: և որոնք փափաք ունէին և հրաւիրուած էին հանգեսին, բայց չի կրցան գալ տեղւոյն հեռաւորութեան և օգոյն գեղութեան պատճառաւ, հեռագրով յայտնեցին իրենց բարեմաղթութիւնները: Ասոնցմէ էին Թեոդորոսի ժողովրդապետն, մեծարդոյ Հ. Քերովքէ Գուշնե-

րեան վարդապետը, և ի Խառատուպազարէ՝ Աղնուամեծար Իգնատիոս Նէմէկեան, Յովսէփ Մարգարէ, Առաքառածատուր Քաղցածեան, Իգնատիոս Քաղցածեան և Ստեփան Տիւկիւճեան Աշայները:

Մեծ քաջաբերութիւնէ ժողովրդեան, ինչպէս նաև իրենց առաջնորդին, այսպիսի հանգէսներ ստեղծ կատարել, որոնք ընդ բնականին ունին նաև իրենց բարոյական օգուտը, և կ'ազգեն ուղղակի ազգասիրին երակներուն վրայ: Կ'ազգեն և ամէն մարդու սրտին վրայ, որոնք քաղաքական կենաց և բուն մարդկութեան վրայ կատարեալ գաղափար ունին:

Ահաբար ընէ ետքը, ժամը 1 ը անցել էր, երբոր նորաշէն տան օրհնութեան հանգէսը կատարուելով, բոլոր ներկայ եղողներն արք և կանայք, երկտասարդք և օրիորդք բազմութեամբ նախաճաշի նստան առաջնորդարանի ամէն սենեակներուն մէջ, ուր պատրաստուած էին այլևայլ համեղ ուտելիքներ և ըմպելիքներ: Երբոր կարգը եկաւ առաջին բաժակ գինին խմելու, կայնեցաւ ի լուսաւորակեան աղջայնոց Սիմֆերոպոլի, Տէր Մարտիրոս քահանայի Իւզպաշեանց, և զեղեցիկ կերպով գովեց ժողովրդեան եռանդը ի յառաջագիտութեան ասպարիզին, և յետ յորդորելոյ զիրենք ի ոէր և ի միաբանութիւն, իր առաջարկութեամբ առաջին բաժակ գինին՝ տեղւոյն առաջնորդին կենացը խմուեցաւ ի ձայն կեցցէի՝ իբրև տանտիրոջ նոր անակարանի:

Նախաճաշը լմնալով, շատ տանն շանցաւ վրան, բոլոր բազմութիւնը ճաշի նստան, ուր տեսնելու բան էր բազմականաց ծիծաղ երեսը, զուարթ խօսակցութիւնները և ամէն մէկին սրտին գոհութիւնը, զոր մի առ մի նկարագրելը անկարելի է, և կանան տես կամ ականջներու իսկ անձին — Ճաշայն մէջոտեղուանքը, երբոր Քաղցիդ Մամբանիս գաւառին Պաքոսի հեղուկքն բաժակներու մէջ առաջմակնաւ սկսան մատուցանել, տեղւոյն Առաջնորդը, իբրև գլուխ ժողովրդեան, առաջարկեց առաջին բաժակ շամբանիս, վրան կենաց և բարօրութեան վնհափառ Ռուսաց կայսեր Ալեքսանդր Ալեքսանդրովիչին խմել: Ի ձայն բարեմաղթութեան առաջնորդին, բոլոր բազմականք ոտք ելած, կրկին և կրկին, ուռուս և կեցցէ՝ աղաղակաւ խառն, ողջունեցին զնորին վնհափառութիւնը՝ զիքնակալ կայսրն Ալեքսանդր Ալեքսանդրովիչ: Ետ օրոյ աղջային երգեցիկ խումբը, — որ օրուան ամբողջ հանգիսին ձեռնառու էր քաղցրաձայն երգերով, — սկսաւ հնչեցնել «*Боже царя*» աղջային երգը ձայնախցութեամբ գայնակի: Վնհափառ կայսեր կենացը խմելէն ետքը, ալ բացուեցաւ ամենուն լեզուին կապը. բարեմաղթութիւնք զբարեմաղթութիւնս կը յաջորդէին, և բուն կեցցենքուն աղաղակը երթալով կը բարձրանար, մինչև ի վերջ սեղանին, երկույնեան ժամը 4 ը անցնէ:

Այսպիսի ուրախութեամբ և սիրով, կատարեցին Սիմֆերոպոլի կաթողիկէ աղագայինք իրենց նոր կանգնած առաջնորդարանին տօնախմբութիւնը, որոյ նմանը փափաքելի է լուսով տեսնել ոչ միայն ի Սիմֆերոպոլ, այլ և այնպիսի իսկ տեղեր, ուր արևը շատոնց ծագել է, բայց մարգիկ լոյս չեն տեսներ: Կը յուսանք, որ Սիմֆերոպոլ մեծարգոյ աղջայինք ետ չեն քաշուիր, այլ կը շարունակեն յառաջագիտութեան պատերազմի գալաւ մըցելու, միտքերնին բերելով որ 19-րդ դարուն պահանջները շատ են: Զրախեան մեծապատիւ Խաչերես աղային՝ իբրև գլուխ ժողովրդեան և հայր հասարակաց, կը մաղթենք օրուանց երկար կեանք, որոյ պէտք ունին ոչ միայն իրեն հարազատ ընտանիքը, այլ և ի օրոյն ընտանիքը. կաթողիկէ աղագայնք Սիմֆերոպոլի, յապագայ երջանկութիւն իւրեանց:

Հ. ՆԻԿ. Վ. ԶՈՂՈՒ.